

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2016
ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

Զեկույցը պատրաստվել է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խմբի կողմից

Բովանդակություն

ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2016թ.	6
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2016թ.	6
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերը՝ ըստ գրանցման տարիների.....	6
ՄԻԱՎ վարակի դեպքերը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի	7
ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ փոխանցման ուղիների	8
Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի համաճարակի զարգացման բնորոշ առանձնահատկությունները	10
ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ Հայաստանի մարզերի	15
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արագածոտնի մարզում.....	16
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արարատի մարզում	17
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արմավիրի մարզում	17
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Գեղարքունիքի մարզում.....	18
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Լոռու մարզում.....	18
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Կոտայքի մարզում	19
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Շիրակի մարզում	19
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Սյունիքի մարզում	20
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Տավուշի մարզում	20
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Վայոց ձորի մարզում	21
Բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները.....	22
ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները	23
ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները.....	24
ՏՍՏ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները.....	26
Գյուղաբնակ աշխատանքային միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները	27
Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում վարքագծային ցուցանիշները.....	28
Երիտասարդների շրջանում վարքագծային ցուցանիշները.....	28
ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և ՏՍՏ-ների շրջանում 2012-2016 թվականներին կենսաբանական և վարքագծային հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները	30
Թմրամիջոցների ներարկային օգտագործողներ	30
Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք	31
Տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ	32
Խմբերի չափերի գնահատում (ԹՆՕ, ԿՍԿ, ՏՍՏ).....	33

Դիսպանսերային հսկողություն, հակառետրոփրուսային բուժում, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում և հետկոնտակտային կանխարգելիչ բուժում	34
Համակցված վարակներ	35
Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում	36
ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ (կասկադ), 2016թ.	37
ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն	38
Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում 2016 թվականի առաջընթացի վերաբերյալ գեկույցի ցուցանիշներ	40
ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ	43
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն	46

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը՝ ըստ գրանցման տարիներ	8
Գծապատկեր 2. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի	8
Գծապատկեր 3. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և գրանցման տարիների	9
Գծապատկեր 4. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների	9
Գծապատկեր 5. ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները՝ ըստ սեռի, 2016թ.	9
Գծապատկեր 6. ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղիների փոփոխությունները, 2004-2016թթ.	12
Գծապատկեր 7. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2016թթ. (արտերկրում վարակվածներ)	13
Գծապատկեր 8. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2016թթ. (Հայաստանում վարակվածներ)	13
Գծապատկեր 9. Վարակման հավանական վայրերը՝ ըստ տարիների, 2009-2016թթ.	14
Գծապատկեր 10. Միգրացիոն գործոնի դերը 2012-2016թթ. արձանագրված դեպքերի կազմում (մեծահասակներ)	14
Գծապատկեր 11. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ բնակչության խմբերի, 2004-2016թթ.	15
Գծապատկեր 12. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի ..	16
Գծապատկեր 13. ՄԻԱՎ-ի տարածվածությունը մեծահասակների շրջանում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում և Հայաստանի Հանրապետությունում, 2015թ.	23
Գծապատկեր 14. ԹՆՕ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2016թ.	25

Գծապատկեր 15.	ԿՍԿ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2016թ.	26
Գծապատկեր 16.	SUS-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2016թ.	28
Գծապատկեր 17.	Պահպանակի օգտագործումը տարբեր զուգընկերների հետ	29
Գծապատկեր 18.	Պահպանակի օգտագործումը տարբեր զուգընկերների հետ	30
Գծապատկեր 19.	ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ	38
Գծապատկեր 20.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ բժշկական կազմակերպություններում.....	47

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1.	ՄԻԱՎ-ով վարակված տղամարդկանց և կանանց բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների.....	11
Աղյուսակ 2.	Երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները	11
Աղյուսակ 3.	ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը 100 հազար բնակչի հաշվով....	16
Աղյուսակ 4.	ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և հեպատիտ Ց-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում	24
Աղյուսակ 5.	ՄԻԱՎ-ի, գոնորեայի, տրիխոմոնիազի, քլամիդիոզի և սիֆիլիսի տարածվածությունը	26
Աղյուսակ 6.	ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը	26
Աղյուսակ 7.	CD4+ լիմֆոցիտների քանակը ՄԻԱՎ վարակի ախտորոշման պահին	35
Աղյուսակ 8.	Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակ	36
Աղյուսակ 9.	Վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակներ	36
Աղյուսակ 10.	Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում.....	37
Աղյուսակ 11.	ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշներ (ՎԿՑ)	38
Աղյուսակ 12.	ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշները մեծահասակների շրջանում, 2016թ.	40
Աղյուսակ 13.	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գլոբալ մոնիտորինգի ցուցանիշներ, 2016թ.....	41
Աղյուսակ 14.	ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ, 2014-2016թթ.	44
Աղյուսակ 15.	ՄԵՄՓԿ-ի կասկադի ցուցանիշներ (ծրագրային տվյալներ, հաշվետվական ձևեր), 2013-2016թթ.	46
Աղյուսակ 16.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ լաբորատորիաների, 2016թ.	48
Աղյուսակ 17.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների թիվը՝ ըստ մարզերի	50
Աղյուսակ 18.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ բնակչության խմբերի և սեռի, 2016թ.....	50

Աղյուսակ 19.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ՀՀ քաղաքացիների բաշխումը՝ ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի, 2016թ.	53
Աղյուսակ 20.	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը, 2011-2016թթ.	54
Աղյուսակ 21.	Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների դինամիկան.....	55
Աղյուսակ 22.	Տրամադրված խորհրդատվության և հետազոտության ծառայությունների դինամիկան՝ ըստ բնակչության խմբերի	56
Աղյուսակ 23.	Միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակներում արագ թեստավորման մեթոդով կատարված հետազոտությունները, 2016թ.....	56

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2016Թ.**

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2016թ.

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2550 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, ներառյալ երեխաների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի 45 դեպք:

ՄԻԱՎ վարակ ունեցողներից 1332-ի մոտ ախտորոշվել է ՁԻԱՀ, որից 26-ը երեխա են: Գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 560 դեպք: Մահացածների թվում կա 8 երեխա:


ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 3300:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերը՝ ըստ գրանցման տարիների

ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ գրանցման տարիների, ցույց է տալիս, որ մինչև 2015թ. տարեցտարի աճել է արձանագրվող դեպքերի թիվը (գծապատկեր 1), որն առավելագույնն է եղել 2014թ.: 2016թ. ընթացքում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 303 դեպք, ախտորոշվել է ՁԻԱՀ-ի 165 դեպք:

Ընդհանուր առմամբ ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի բոլոր գրանցված դեպքերի ավելի քան կեսն արձանագրվել է վերջին 5 տարիների ընթացքում:


Գծապատկեր 1. ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը՝ ըստ գրանցման տարիների



ՄԻԱՎ վարակի դեպքերը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի


ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ տարիքային խմբերի և սեռի, ցույց է տալիս, որ ՄԻԱՎ-ով վարակվածների կեսից ավելին՝ 52%-ը 25-39 տարիքային խմբում է, այսինքն՝ ակտիվ վերարտադրողական հասակում (գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի



ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և գրանցման տարիների ցույց է տալիս, որ ՄԻԱՎ վարակ ունեցողների ընդհանուր կազմում գերակշռողը արական սեռի ներկայացուցիչներն են՝ 69%, իգական սեռի ներկայացուցիչները կազմում են 31% (գծապատկեր 3):


Գծապատկեր 3. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և գրանցման տարիների



ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ փոխանցման ուղիների


ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների, ցույց է տալիս, որ ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (66,5%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (24%): Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով (3%), մորից երեխային (1,6%) և արյան միջոցով (0,2%) ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր (գծապատկեր 4):

Գծապատկեր 4. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների



Հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցումը վարակման հիմնական ուղին է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց շրջանում (գծապատկեր 5): ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների և սեռի, ցույց է տալիս, որ տղամարդկանց կեսից ավելին (54,8%) վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, իսկ 35,3%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով: Գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (97,3%):

Գծապատկեր 5. ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները՝ ըստ սեռի, 2016թ.



ՄԻԱՎ-ով վարակված տղամարդկանց և կանանց բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների, ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ՄԻԱՎ-ով վարակված տղամարդկանց և կանանց բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների

Սեռ	Փոխանցման ուղի										Ընդամենը	
	Թմրամիջոցների ներարկային օգտագործում		Հետերոսեքսուալ հարաբերություններ		Հոմոսեքսուալ հարաբերություններ		Արյուն		Անհայտ			
	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%
Ար	614	35,2	954	54,8	75	4,3	-	-	99	5,7	1742	100
Իգ	3	0,4	742	97,3	-	-	1	0,1	17	2,2	763	100

Գրեթե բոլոր երեխաները վարակվել են ՄԻԱՎ վարակ ունեցող իրենց մայրերից (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները

Մորից երեխային		Արյան միջոցով		Անհայտ		Ընդամենը	
Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%
40	89	3	6,5	2	4,5	45	100

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի համաճարակի զարգացման բնորոշ առանձնահատկությունները


Մեր երկրում ՄԻԱՎ վարակի տարածումն ունի որոշակի առանձնահատկություններ տարածաշրջանի այլ երկրների համեմատ: Դրանք են՝

- Վարակի փոխանցման հիմնական ուղին հետերոսեքսուալ ճանապարհն է (2016թ.՝ 79,2%):
- Արձանագրված ՄԻԱՎ վարակով պացիենտների մեծամասնությունը վարակվել է արտերկրում (2016թ.՝ 51,5%):
- Արձանագրվող դեպքերի թվում զգալի է միգրացիայի ազդեցությունը (2012-2016թթ.՝ 68,1%):
- Վերջին տարիներին էապես նվազել է արձանագրվող դեպքերի ընդհանուր կազմում «դասական ռիսկի խմբերի»՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ), կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կա-

նանց (ԿՍԿ), հոմոսեքսուալ կապեր ունեցող տղամարդկանց (SUS) մասնաբաժինը (2016թ.՝ 17,8%):


ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի համաճարակի առաջին բնորոշ առանձնահատկությունն այն է, որ սկսած 2004թ. նկատվում է փոխանցման հիմնական ուղիների փոփոխություն (գծապատկեր 6): Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակման դեպքերի մասնաբաժինը 2004-2016թթ. ընկած ժամանակահատվածում նվազել է ավելի քան 5,8 անգամ՝ հասնելով 11,5%-ի, իսկ հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերն աճել են ավելի քան 2,6 անգամ՝ հասնելով 79,2%-ի:

Գծապատկեր 6. ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղիների փոփոխությունները, 2004-2016թթ.




Հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերի աճի և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակման դեպքերի նվազման միտում դիտվում է նաև արտերկրում վարակվածների շրջանում (գծապատկեր 7): 2009-2016թթ. ընկած ժամանակահատվածում արտերկրում վարակվածների շրջանում հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերի մասնաբաժինն ավելացել է ավելի քան 1,5 անգամ, իսկ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակման դեպքերինը՝ նվազել 2,3 անգամ: 2016թ. վարակման հետերոսեքսուալ ուղին կազմել է մոտ 75%, իսկ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակման ուղին՝ մոտ 19,9%:

Գծապատկեր 7. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2016թթ. (արտերկրում վարակվածներ)




Նմանատիպ միտում դիտվում է ՀՀ-ում վարակվածների շրջանում (գծապատկեր 8): Մասնավորապես, հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերն ավելացել են և 2016թ. կազմել են 86,6%, իսկ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակման դեպքերը նվազել են մինչև 1,5%:

Գծապատկեր 8. ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2009-2016թթ. (Հայաստանում վարակվածներ)




ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի համաճարակի **երկրորդ բնորոշ** առանձնահատկությունն այն է, որ վերջին տարիներին բավականին մեծացել է միգրացիայի գործոնի ազդեցությունը երկրում արձանագրվող դեպքերի ընդհանուր թվի վրա (գծապատկեր 9): Այսպես, 2009-2016թթ. ընթացքում արձանագրված ՄԻԱՎ վարակով պացիենտների կեսից ավելին, հավանաբար վարակվել է արտերկրում, որոնցից ավելի քան 90%-ը՝ ՌԴ-ում (ՌԴ – 91%, Ուկրաինա – 4,7%, Լեհաստան – 0,7%, Ղազախստան – 0,7%, այլ երկրներ – 2,9%):

Գծապատկեր 9. *Վարակման հավանական վայրերը՝ ըստ տարիների, 2009–2016թթ.*




Ընդհանուր առմամբ 2012-2016թթ. արձանագրված դեպքերի մեծամասնությունը՝ 56,6%-ը, կազմում են արտերկրում վարակվածները, 11,5%-ը՝ նրանց զուգրնկերները (գծապատկեր 10): Այսպիսով, արձանագրված դեպքերի 68,1%-ը կապված է միգրացիայի հետ:

Գծապատկեր 10. *Միգրացիոն գործոնի դերը 2012-2016թթ. արձանագրված դեպքերի կազմում (մեծահասակներ)*



ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի համաճարակի **երրորդ քնորոշ** առանձնահատկությունն այն է, որ սկսած 2004թ.՝ տարեցտարի նվազում է արձանագրվող դեպքերի ընդհանուր կազմում, այսպես կոչված, «դասական դիսկի խմբերի», այսինքն՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց և հոմոսեքսուալ կապեր ունեցող տղամարդկանց համամասնությունը (գծապատկեր 11): 2004-2016թթ. ընկած ժամանակահատվածում այն նվազել է մոտ 4 անգամ, և 2016թ. կազմել է 17,8%: Մեծամասնությունը՝ 78,2%-ը, կազմում են միգրանտները և նրանց զուգընկերները, վերոնշյալ խմբերին պատկանողների զուգընկերները, ոչ անվտանգ սեռական վարքագիծ դրսևորողները:


Գծապատկեր 11. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ բնակչության խմբերի, 2004-2016թթ.



ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ Հայաստանի մարզերի

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է Երևանի բնակիչների շրջանում՝ 806 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի մոտ 1/3-ը (գծապատկեր 12): ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 292 դեպք, ինչը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 11,5%-ը:

Գծապատկեր 12. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի



ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով ցույց է տալիս, որ ամենաբարձր ցուցանիշը Շիրակում է՝ 120,1, որին հաջորդում են Լոռու մարզը, Սյունիքի մարզը, Գեղարքունիքի մարզը, համապատասխանաբար 112,9; 81,8; 81,5 (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը 100 հազար բնակչի հաշվով

Մարզ	ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը 100 հազար բնակչի հաշվով
Երևան	75,1
Շիրակ	120,1
Լոռի	112,9
Սյունիք	81,8
Գեղարքունիք	81,5
Արմավիր	80,6
Արագածոտն	79,4
Արարատ	77,6
Կոտայք	73,7
Վայոց ձոր	63,0
Տավուշ	54,2
Ընդհանուր	82,4

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արագածոտնի մարզում

Արագածոտնի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 103 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 70 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 33 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների ավելի քան 45%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 75,7%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 17,5%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել է հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 3 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 56-ի մոտ (կին՝ 14, երեխա՝ 1) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 16 դեպք: Մահացածների թվում կա 2 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 83-ը (կին՝ 31, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 60-ը ստանում են ՀՌԿ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 79,4:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արարատի մարզում

Արարատի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 201 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 138 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 63 դեպք (31%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 4 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 48,8%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 69,6%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 21,9%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 4 և հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 6 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 107-ի մոտ (կին՝ 33, երեխա՝ 3) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 49 դեպք: Մահացածների թվում կան 11 կին և 3 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 136-ը (կին՝ 50, երեխա՝ 1) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 82-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 77,6:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արմավիրի մարզում

Արմավիրի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 215 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 144 մարդ (67%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 71 դեպք (33%): Երեխայների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 5 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 53%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 67,9%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 22,8%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 4, հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման՝ 6 և արյան միջոցով փոխանցման՝ 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 126-ի մոտ (կին՝ 30, երեխա՝ 4) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 47 դեպք: Մահացածների թվում կան 9 կին և 1 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 158-ը (կին՝ 60, երեխա՝ 4) գտնվում են դիս-

պանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 105-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 80,6:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Գեղարքունիքի մարզում

Գեղարքունիքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 189 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 138 մարդ (73%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 51 դեպք (27%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 3 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների ավելի քան 57%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 85,2%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 10,6%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2 և արյան միջոցով փոխանցման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 68-ի մոտ (կին՝ 8, երեխա՝ 2) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 20 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 139 (կին՝ 41, երեխա՝ 3) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 82-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 81,5:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Լոռու մարզում

Լոռու մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 254 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 175 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 79 դեպք (31%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 9 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 57%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 65%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 21,3%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 9 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 10 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 128-ի մոտ (կին՝ 32, երեխա՝ 4) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 68 դեպք: Մահացածների թվում կան 14 կին և 2 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 173-ը (կին՝ 62, երեխա՝ 6) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 106-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 112,9:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Կոտայքի մարզում

Կոտայքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 187 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 136 մարդ (72,7%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 51 դեպք (27,3%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 4 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների ավելի քան 50%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 72,2%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 17%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 3 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 9 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 100-ի մոտ (կին՝ 22, երեխա՝ 3) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 36 դեպք: Մահացածների թվում կա 6 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 144-ը (կին՝ 45, երեխա՝ 4) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 98-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 73,7:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Շիրակի մարզում

Շիրակի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 292 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 203 մարդ (69,5%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 89 դեպք (30,5%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 53%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 67%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 26%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2, հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 8 և արյան միջոցով վարակման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 147-ի մոտ (կին՝ 39, երեխա՝ 1) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 56 դեպք: Մահացածների թվում կա 5 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 210-ը (կին՝ 76, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 138-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 120,1:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Սյունիքի մարզում

Սյունիքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 114 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 73 մարդ (64%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 41 դեպք (36%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 54%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 70%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 24,6%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել է մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 57-ի մոտ (կին՝ 13, երեխա՝ 1) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 24 դեպք: Մահացածների թվում կա 9 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 83-ը (կին՝ 29, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 54-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 81,8:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Տավուշի մարզում

Տավուշի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 68 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 45 մարդ (66%), իգական սեռի ներկայացուցիչների

շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 23 դեպք (34%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 1 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 50%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 76,5%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 14,7%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 3 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 37-ի մոտ (կին՝ 9) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 12 դեպք: Մահացածների թվում կա 2 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 55-ը (կին՝ 20, երեխա՝ 1) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 38-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 54,2:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Վայոց ձորի մարզում

Վայոց ձորի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 32 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 23 մարդ (72%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է վարակի 9 դեպք (28%): Երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 47%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 81,2%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 15,6%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի, արձանագրվել է հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 20-ի մոտ (կին՝ 5) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 10 դեպք: Մահացածների թվում կա 1 կին:


ՄԻԱՎ վարակով պացիենտներից 21-ը (կին՝ 8) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 15-ը ստանում են ՀՌՎ բուժում:

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով կազմում է 63,0:

Բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները

Եթե մեծահասակ բնակչության՝ 15-49 տարեկանների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կազմում է 0,9%, Ուկրաինաում՝ 0,9%, Մոլդովայում՝ 0,6%, Բելառուսում՝ 0,6%, Վրաստանում՝ 0,4% և Տաջիկստանում՝ 0,3%, ապա Հայաստանում այդ ցուցանիշը համեմատաբար ցածր է և կազմում է 0,2%, այսինքն՝ 4,5 անգամ ցածր է տարածաշրջանային միջին ցուցանիշից (գծապատկեր 13):

Գծապատկեր 13. *ՄԻԱՎ-ի տարածվածությունը մեծահասակների շրջանում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում և Հայաստանի Հանրապետությունում, 2015թ.*



**ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը
և վարքագծային ցուցանիշները**


ԹՆՕ-ների շրջանում 2016թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և հեպատիտ Ց-ի տարածվածությունն ամենաբարձրն էր Վանաձորի ԹՆՕ-ների (համապատասխանաբար՝ 2%, 6%, և 63%) և ամենացածրը Գյումրիի ԹՆՕ-ների շրջանում. հեպատիտ Ց-ի տարածվածությունը կազմել է 8%, ՄԻԱՎ-ի և սիֆիլիսի նկատմամբ դրական դեպքեր հետազոտության արդյունքում չեն արձանագրվել (աղյուսակ 4): Երևանի ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը կազմել է 0,5%, սիֆիլիսինը՝ 2,1%, հեպատիտ Ց-ինը՝ 31%:

Աղյուսակ 4. ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և հեպատիտ Ց-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում

	Երևան N = 300		Գյումրի N = 100		Վանաձոր N = 100	
	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)
ՄԻԱՎ վարակ						
	2	0,5 (0,0-1,3)	0	0,0	2	1,6 (0,0-3,2)
Սիֆիլիս						
	4	2,1 (0,0-4,7)	0	0,0	5	5,9 (1,3-10,4)
Հեպատիտ Ց						
	91	30,7 (24,4-37,1)	8	8,0 (2,7-13,3)	64	62,6 (51,9-73,4)

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակն ամենաբարձրն է եղել Վանաձորում՝ մոտ 96%, Երևանում կազմել է ընդամենը 54% և Գյումրիում՝ 79%: Երեք քառորդից ավելին սեռական հարաբերություններ է ունեցել վերջին ամսվա ընթացքում, որոնցից սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել Երևանի ԹՆՕ-ների 55,6%-ը, Գյումրիի ԹՆՕ-ների 53,2%-ը և Վանաձորի ԹՆՕ-ների ընդամենը 76,5%-ը: Բոլոր երեք քաղաքներում բարձր է եղել մանրէազերծ ներարկման պարագաների օգտագործման ցուցանիշը (գծապատկեր 14)

Գծապատկեր 14. ԹՆՕ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2016թ.



ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները


ԿՍԿ-ների շրջանում 2016թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ՄԻԱՎ-ի տարածվածությունը ցածր էր Երևանում և Գյումրիում (0,1%), իսկ Վանաձորում հետազոտության ընթացքում որևէ դեպք չի արձանագրվել (աղյուսակ 5): Գոնորեայի տարածվածությունը կազմել է Երևանում 4%, Գյումրիում՝ 3%, իսկ Վանաձորում հետազոտության ընթացքում գոնորեայի որևէ դեպք չի արձանագրվել: Տրիխոմոնիազի տարածվածությունը կազմել է Երևանում՝ 29%, Գյումրիում՝ 18%, Վանաձորում՝ 20%: Քլամիդիոզի ամենաբարձր տարածվածությունը եղել է Երևանի ԿՍԿ-ների շրջանում՝ 12%, իսկ Գյումրիում և Վանաձորում կազմել է համապատասխանաբար 6% և 4%: Սիֆիլիսի տարածվածությունը Երևանում և Գյումրիում կազմել է 4%, իսկ Վանաձորում՝ 2,5%:

Աղյուսակ 5. ՄԻԱՎ-ի, գոնորեայի, տրիխոմոնիազի, քլամիդիոզի և սիֆիլիսի տարածվածությունը

	Երևան N = 300		Գյումրի N = 100		Վանաձոր N = 100	
	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)
ՄԻԱՎ						
	1	0,1 (0,0-0,1)	1	0,1 (0,0-0,1)	0	--
Գոնորեա						
	12	3,9 (1,6-6,2)	4	2,9 (1,2-4,5)	0	--
Տրիխոմոնիազ						
	88	29,4 (23,2-35,5)	21	18,0 (11,9-23,9)	19	20,4 (11,7-29,1)
Քլամիդիոզ						
	36	12,3 (7,5-17,1)	7	6,4 (2,9-9,6)	4	4,1 (0,0-8,1)
Սիֆիլիս						
	13	4,0 (1,4-6,6)	4	4,3 (1,1-7,5)	2	2,5 (0,0-5,7)

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է Վանաձորում՝ 94% է, Երևանում՝ 52%, Գյումրիում 41%: Բոլոր երեք քաղաքներում ԿՍԿ-ների գերակշռող մեծամասնությունը մշտապես, ինչպես նաև վերջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել է պահպանակ կոմերցիոն զուգընկերոջ հետ: Կանխարգելման ծառայություններում ԿՍԿ-ների ընդգրկվածության ցուցանիշը գտնվում է 63%-ից 98%-ի սահմաններում (գծապատկեր 15):

Գծապատկեր 15. ԿՍԿ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2016թ.



**SUS-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը
և վարքագծային ցուցանիշները**

SUS-ների շրջանում 2016թ. անցկացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Երևանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 0,8%, իսկ հեպատիտ Բ-ի տարածվածությունը՝ 0,3%: Հետազոտության ընթացքում Երևանում սիֆիլիսի որևէ դեպք չի արձանագրվել (աղյուսակ 6): Գյումրիում ՄԻԱՎ-ի տարածվածությունը կազմել է 0,7%, սիֆիլիսի տարածվածությունը՝ 0,3%, իսկ հեպատիտ Բ-ի տարածվածությունը՝ 1,6%: Հետազոտության ընթացքում Վանաձորում ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի, հեպատիտ Բ-ի որևէ դեպք չի արձանագրվել:


Աղյուսակ 6. *ՄԻԱՎ վարակի, սիֆիլիսի և հեպատիտ Բ-ի տարածվածությունը*

	Երևան N = 300		Գյումրի N = 100		Վանաձոր N = 100	
	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)	N	%, (95% ՎՄ)
ՄԻԱՎ վարակ						
	3	0,8 (0,0-1,6)	2	0,7 (0,2-1,2)	0	0,0
Սիֆիլիս						
	0	0,0	1	0,3 (0,0-0,6)	0	0,0
Հեպատիտ Բ						
	2	0,3 (0,0-0,7)	3	1,6 (0,1-3,2)	0	0,0

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման մակարդակն ամենաբարձրն է եղել Վանաձորում՝ 84%, Գյումրիում կազմել է ընդամենը 51% և Երևանում՝ 75%: ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում Երևանում ընդգրկված է եղել SUS-ների 40%-ը, Վանաձորում՝ 22%-ը, Գյումրիում միայն 2%-ը:

Երևանում SUS-ների 80%-ը և Վանաձորում՝ 95%-ը, իսկ Գյումրիում միայն 26%-ն է օգտագործել պահպանակ տղամարդու հետ վերջին անալ սեռական հարաբերության ժամանակ (գծապատկեր 16):

Գծապատկեր 16. *SUS-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2016թ.*



Գյուղաբնակ աշխատանքային միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները

« Գյուղաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում 2016թ. իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ նրանց շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը կազմել է 0,2%, հեպատիտ Բ-ի տարածվածությունը՝ 0,6%, հեպատիտ Ց-ի տարածվածությունը՝ 2,1%, և սիֆիլիսի տարածվածությունը՝ 0,3%: ՄԻԱՎ վարակի տարածվածությունը 18-49 տարիքային խմբում կազմել է 0,6%:

Մշտական զուգընկերոջ հետ արտեկրում պահպանակ օգտագործել է 18-49 տարիքային խմբի գյուղաբնակ միգրանտների 47,7%-ը, իսկ Հայաստանում ընդամենը 12,2%-ը:

Պատահական զուգընկերոջ հետ արտեկրում պահպանակ է օգտագործել 18-49 տարիքային խմբի գյուղաբնակ միգրանտների 82,3%-ը, իսկ Հայաստանում 76,6%-ը:


Կոմերցիոն զուգընկերոջ հետ արտեկրում պահպանակ օգտագործել է 18-49 տարիքային խմբի գյուղաբնակ միգրանտների 91,9%-ը, իսկ Հայաստանում 83,8%-ը: Երբևէ թմրամիջոցներ գործածել է գյուղաբնակ միգրանտների 8,5%-ը: Երբևէ թմրամիջոցներ գործածած միգրանտների միայն 0,3%-ն է օգտագործել թմրամիջոցներ ներարկային ճանապարհով:

ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գյուղաբնակ միգրանտների գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է 34%:

Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում վարքագծային ցուցանիշները

Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում 2016թ. իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել մոտ քրեակատարողական հիմնարկներում գտնվողների 93%-ը: Պատահական զուգընկոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել է 85,7%-ը: Հարցման ենթարկվածների միայն 44,4%-ն է վերջին մեկ տարվա ընթացքում բոլոր զուգընկերների հետ մշտապես պահպանակ օգտագործել (գծապատկեր 17):

Գծապատկեր 17. Պահպանակի օգտագործումը տարբեր զուգընկերների հետ



Միաժամանակ հարցման ենթարկվածների 79,5%-ը նշել է, որ ՔԿՀ-ում գտնվող անձն անհրաժեշտության դեպքում կարող է ձեռք բերել պահպանակ:


Կանխարգելման ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 80,7%: Հարցման ենթարկվածների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է 27,1%:

Երիտասարդների շրջանում վարքագծային ցուցանիշները

Երիտասարդների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել 71,4%-ը: Պատահական զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործել է 86,1%-ը:

Հարցման ենթարկվածների 61,2%-ն է վերջին մեկ տարվա ընթացքում բոլոր զուգընկերների հետ մշտապես պահպանակ օգտագործել (գծապատկեր 18):


Գծապատկեր 18. Պահպանակի օգտագործումը տարբեր զուգընկերների հետ




Վերջին 12 ամսվա ընթացքում հարցման ենթարկվածների ընդամենը 3,7%-ն է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ: ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման ցուցանիշը կազմել է մոտ 40%

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում 2012-2016 թվականներին կենսաբանական և վարքագծային հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները

Թմրամիջոցների ներարկային օգտագործողներ




Նկատվում է վերջին ամսվա ընթացքում վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման նշանակալի աճ, սկսած 2012թ. 36,8% -ից մինչև 55,6%՝ 2016թ.-ին ($X^2 = 21,46$, $p = 0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 2,4%:



ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում էականորեն նվազել է՝ 2012թ.-ի 7,6%-ից մինչև 0,5%՝ 2016թ. ($X^2 = 19,08$, $p = 0,655$): Տարեկան միջին տոկոսային նվազումը կազմել է 1,8%:


Հեպատիտ Ց-ի տարածվածությունը



Հեպատիտ Ց-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում նշանակալիորեն նվազել է 2012թ.-ի 51,2%-ից մինչև 30,8%՝ 2016թ. ($X^2 = 25,23$, $p = 0,000$): Տարեկան միջին տոկոսային նվազումը կազմել է 5,1%:


Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք

Պահպանակի օգտագործումը վերջին հաճախորդի հետ վերջին 12 ամիսների ընթացքում




Նկատվում է վերջին տարվա ընթացքում հաճախորդի հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման նշանակալի աճ՝ 2012թ.-ի 90,2%-ից մինչև 99,6%՝ 2016թ. ($X^2 = 24,93$, $p = 0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 2,4%:

ՄԻԱՎ-ի տարածվածությունը



ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում նշանակալիորեն նվազել է 2012թ.-ի 1,3%-ից մինչև 0,1%՝ 2016թ. ($X^2 = 4,65$, $p = 0,031$): Տարեկան միջին նվազումը կազմել է 0,3%:


Տրիխոմոնիազի տարածվածությունը



ԿՍԿ-ների շրջանում տրիխոմոնիազի տարածվածության նշանակալի փոփոխություն չի նկատվել ($X^2 = 3,68$, $p = 0,055$):


Տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ

Պահպանակի օգտագործումը արական սեռի վերջին զուգընկերոջ հետ վերջին 12 ամիսների ընթացքում



Վերջին տարվա ընթացքում տղամարդ զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը նշանակալիորեն աճել է 2012թ.-ի 57,9%-ից մինչև 80,4%՝ 2016թ. ($X^2 = 34,84$, $p = 0,000$): Տարեկան միջին աճը կազմել է 5,6%:

ՄԻԱՎ-ի տարածվածությունը



SUS-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածության էական փոփոխություն չի նկատվել ($X^2 = 3,56$, $p = 0,059$):

Խմբերի չափերի գնահատում (ԹՆՕ, ԿՍԿ, ՏՍՏ)

2016թ. իրականացվել է խմբերի չափերի գնահատում: Խմբերի չափերի հաշվարկման արդյունքում երկրի համար ստացվել են հետևյալ տվյալները՝ ԿՍԿ-ներ 5634 (իգական սեռի մեծահասակ բնակչության 0,45%), ՏՍՏ-ներ՝ 12461 (արական սեռի մեծահասակ բնակչության 1,2%), արական սեռի ԹՆՕ-ներ՝ 9402 (արական սեռի մեծահասակ բնակչության 0,8%), իգական սեռի ԹՆՕ-ներ՝ 105 (0,01%):

Դիսպանսերային հսկողություն, հակառետրովիրուսային բուժում, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում և հետկոնտակտային կանխարգելիչ բուժում

2016թ. վերջի դրությամբ դիսպանսերային հսկողության մեջ գտնվել է ՄԻԱՎ վարակով 1811 պացիենտ, որոնցից 32-ը՝ երեխաներ: 2016թ. ընթացքում ՄԻԱՎ վարակով 1559 պացիենտ այցելել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ և ստացել համապատասխան բուժօգնություն, նրանցից 27-ը եղել են երեխաներ: 2016թ. վերջի դրությամբ 1188 պացիենտ ստանում էր հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժում, որոնցից 25-ը՝ երեխաներ: 2016թ. ընթացքում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում ստացել և ավարտել է 37 հղի: Հետկոնտակտային կանխարգելիչ բուժում տրամադրվել է 38 մարդու:

ՀՌՎ բուժումն սկսելուց 12 ամիս հետո բուժման մեջ գտնվող մեծահասակների և երեխաների տոկոսը 2016թ. կազմել է 88,8%: Վերջին 6 տարիների ընթացքում ՄԻԱՎ վարակ ունեցողների կեսից ավելին (56,7%) ախտորոշվել են ՄԻԱՎ վարակի ուշ փուլերում՝ ունենալով CD4+ լիմֆոցիտների 350 բջիջ/մմ³-ից ցածր մակարդակ (աղյուսակ 7):

Աղյուսակ 7. CD4+ լիմֆոցիտների քանակը ՄԻԱՎ վարակի ախտորոշման պահին

CD4 + լիմֆոցիտների մակարդակը	Պացիենտների ընդհանուր %-ը 2010-2016թթ.
<200	38,8
200-349	17,9
350-499	16
>500	27,3
Ընդամենը	100

Համակցված վարակներ

2016թ. արձանագրվել է տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակի 64 դեպք (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակ

Տարեթիվ	Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր թիվը
2008	45
2009	70
2010	66
2011	62
2012	79
2013	67
2014	86
2015	81
2016	64

2016թ. ընթացքում արձանագրվել են վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ համակցված վարակի 39 և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակի 6 դեպք (աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Վիրուսային հեպատիտ Զ/ՄԻԱՎ և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակներ

Տարեթիվ	Վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ	Վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ	Վիրուսային հեպատիտ Ց/վիրուսային հեպատիտ Բ /ՄԻԱՎ
2010	12	1	-
2011	24	-	-
2012	19	3	-
2013	33	6	3
2014	44	7	1
2015	30	2	1
2016	39	6	-

Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում

2016թ. վերջի դրությամբ մեթադոնային փոխարինող բուժում ստացողների թիվը կազմել է 495, որոնցից 162-ը՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ: 495 մեթադոնային փոխարինող բուժում ստացողներից 29-ը եղել են ՄԻԱՎ վարակով պացիենտ (աղյուսակ 10):


Աղյուսակ 10. Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում

Համակազմ	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Օփիոիդային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ների ընդհանուր թիվը	111	160	214	301	430	480	495
ՔԿՀ-ներում գտնվողներ	-	13	30	70	131	159	162
ՄԻԱՎ վարակ ունեցողներ	9	20	20	21	26	30	29

ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ (կասկադ), 2016թ.

2016թ. վերջի դրությամբ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմել է 3300 (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի «Սպեկտրում» համակարգչային ծրագրի տվյալ), որոնցից իրենց կարգավիճակի մասին իմացել են միայն 1990-ը (60,3%): Նրանցից դիսպանսերային հսկողության վերցվել է 1811-ը (91%), վերջին մեկ տարվա ընթացքում ՁԻԱՀ-ի ԿԿԿ է այցելել և դիսպանսերային հսկողություն է անցել 1504-ը (83%), ՀՌՎ բուժում է ստացել 1188-ը (79%), չհայտնաբերվող վիրուսային ծանրաբեռնվածություն է ունեցել 995-ը (բուժում ստացողների 83,8%-ը): Ինչպես երևում է ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակից (գծապատկեր 19), ամենամեծ բացը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թվի և իրենց կարգավիճակն իմացողների միջև առկա տարբերությունն է:

Գծապատկեր 19. ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ



ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն

ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի առաջնային (փոխանցվող) դեղակայունության հայտնաբերման, ՀՀ-ում դեղակայունության մուտագիանների համաճարակաբանական հսկողության, երկրի տարածքում շրջանառվող ՄԻԱՎ-ի առավել տարածված ենթատիպերի որոշման նպատակով 2015թ. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ներդրվել է ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողությունը:

